

Էլաւ, քշից ձին, կինաց. կինաց, կաթնով յախարի վերայ ձին
չոք էզար գետըն. որ չոք էզար գետըն, ուրբեր ըմ էզար. ինչ ուր-
բեր ըմ էզար, ձիու մէկ կուղաշարք կուտրից:

Էսաց.—Մէկ սհաթուան ճամբախ իս քէլի, ինչ շիւտ մու-
նացար¹⁾, որ չոքի գետըն կ'զարկիս:

Ձինք փուշմընաւ²⁾, էսաց.—Իմ խրօխպէր ընձը շիրաթ էրաւ,
էնու խօսք պտը չ'տամ գետըն:

Էլաւ, ուր ձիուն էմ էտու, զձին քշից, ջիւր իտու. ձին
ջիւր խմաւ, զինք լէ մտաւ ջիւրու մէջ, լողկացաւ. ուր շուրիք խա-
գաւ, պառկաւ մաչ³⁾ ձիու չուրս ստաց, քինաւ:

Աէս գիշերին ակախաւ, տեսաւ՝ կըփկըփուց ինկի ուր ջան,
ուր շուրիք. ինչ էլաւ, կանգընաւ՝ քեամարի կուտուրնիր յըմէն
մէկ տեղ ըմ կինաց. զինքն էլ շատ ծիււղացի, Աստու շնուքով
լցուիր ի. քեառսուն զիտր բամբակ էնու ջղմէքն էր, էխան, էթալ-
անջախ վուտրիր մտաւ մէջ. քեառսուն զիտր բամբակ էնու գիւ-
տին էր, էն քեառսուն զիտր բամբակ էխան, էթալ, անջախ մտաւ
գլեռիս. կապէն էրկու տակ վերայ էր, էրաւ մէկ տակ, անջախ է-
կաւ չոքիք բոնից. [թրի կայիչ 1) եօթ փաթ պիւլիւր մէջացն էր,
արձկից, մէկ փաթ անջախ խասաւ. [թուրն էրկու փայ⁵⁾ գետըն
կ'քաշէր, ինչ կապից, չոքիքու վերայ անջախ խասաւ:

Բարի լիւս ինչ բացուաւ, էլաւ զիւր աղօթ էրաւ, զիւր
ձին խեծաւ, քշից, կինաց պողվըտէ սուն վերայ կանգնաւ, էսաց.

«Յիշեա իմ խացն ու գինին,

Տէր կենդանին,

Մարութայ բանձր Աստուարածին,

Խաչ պատրագին

Վեար Դաւթի աջ [թիւին»:

Թուր քեշից, էզար պողվըտէ սան. սուն կտրից, կալամ վեար

1) Ծուլացար, [թուլացար: 2) Ձղջաց: 3) Մէջ: 4) Դօտի կա-
շուց: 5) Բաժին: